*ՆԱԽԱԳԻԾ*

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«___» _____ 2019 թվական N_____-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 307-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի «Կառուցված և կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի վերաբերյալ հարկային մարմնին տեղեկություններ տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 307-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «ՇԵՆՔԵՐԻ» բառից հետո լրացնել «, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ» բառերը.

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում և որոշմամբ սահմանված կարգի 1-ին կետում «շենքերի» բառերից հետո լրացնել «, անհատական բնակելի տների» բառերը.

3) որոշման և որոշմամբ սահմանված կարգի 1-ին կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերի համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

4) որոշմամբ սահմանված կարգի՝

ա. վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. 3-րդ և 5-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**